ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13» հուլիսի 2017 թվականի №.....88-Ա

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի /ՎԴ/2162/05/17 վարչական գործ/ 30.05.2017թ. վճիռը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի՝ Գլաձորի բազմամետաղային հանքավայրի բացահանքի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության պետական փորձաքննական բացասական ԲՓ-105 եզրակացությունը, հաշվի առնելով վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի 10.07.2017թ. արձանագրությունը և որ առանց փորձաքննական դրական եզրակացության արգելվում է նախատեսվող գործունեության (արդյունահանման) իրականացումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 51-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 20-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Մերժել «ՎԱՅԿ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ին Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձորի բազմամետաղային հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը:
2. Ընդերքի տրամադրման գործակալության պետին.

Գրանցել «ՎԱՅԿ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձորի բազմամետաղային հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման

ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 02/09 դիմումի մերժումը ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման գրանցամատյանում :

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ՝ Վարդան Գևորգյանին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ